ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-9 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2013թ-ի հուլիսի 17-ին կնքված ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-9 ծածկագրով պայմանագրում 2015թ-ի դեկտեմբերի 1-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Անհրաժեշտություն է առաջացել երկարաձգել ծառայությունների մատուցման ժամկետը և և մասնակի լուծել պայմանագիրը:

Փոփոխության նկարագրություն:

1. Պայմանագրով նախատեսված ծառայությունների կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև՝ 2016 թվականի սեպտեմբերի 1-ը ներառյալ:

2. Գնման պայմանագիրը մասնակի լուծվել է՝ 1 005 000 (մեկ միլիոն հինգ հազար) ՀՀ դրամով և պայմանագրի գինը սահմանվել է 23 124 000 (քսաներեք միլիոն մեկ հարյուր քսաչորս հազար) ՀՀ դրամ:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 19.11.2015թ. թիվ 1352-Ն որոշում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 011 800 117:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ ֆինանսների նախարարություն**

Համաձայնագիր-6
17.07.13թ. կնքված N ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-9 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան « 01 » դեկտեմբերի 2015թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի մի կողմից, և Ճարտարապետական արվեստանոց «ՋԱԱՐՏ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության տնօրեն Ա.Զուրաբյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 17.07.13թ. կնքված N ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-9 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 19.11.2015թ. թիվ 1352-Ն որոշումը՝ երկարաձգել Պայմանագրով նախատեսված ծառայությունների կատարման ժամկետը, այն սահմանելով մինչև 2016 թվականի սեպտեմբերի 1-ը ներառյալ:

1.2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 19.11.2015թ. թիվ 1352-Ն որոշումը՝ 17.07.13թ. կնքված N ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-9 գնման պայմանագիրը մասնակի լուծել՝ 1 005 000 (մեկ միլիոն հինգ հազար) ՀՀ դրամով և պայմանագրի գինը սահմանել 23 124 000 (քսաներեք միլիոն մեկ հարյուր քսաչորս հազար) ՀՀ դրամ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ ֆինանսների նախարարություն	Ճարտարապետական արվեստանոց «ՋԱԱՐՏ» ՍՊԸ
ք. Երևան, Մ.Ադամյան-1	ք.Երևան, Մաշտոցի-16/42
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	«Յունիբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900013574018, 900013202016	Հ/Հ 24100102754900
ՀՎՀՀ 02629081	ՀՎՀՀ 02572984
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝	Ճարտարապետական արվեստանոց «ՋԱԱՐՏ» ՍՊԸ-ի տնօրեն՝
Ա.Արզումանյան	**Ա.Զուրաբյան**